ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

14 Մարտի 2018թ. N 21

ք. Եղեգնաձոր

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավաբանական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի “ա” ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 457-Ա հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վայոց ձորի մարզի պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական ընկերություններում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրելու համար ըստ

տարածաշրջանների ստեղծել մշտական գործող հանձնաժողովներ՝ /այսուհետ՝ ուղեգրող հանձնաժողով/ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել ուղեգրող հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի 2-ի:

3. Հանձնաժողովներին՝

ա/ գործունեությունը կազմակերպել Վայոց ձորի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պոլիկլինիկական կազմակերպություններում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովներին ՀՀ առողջապահության նախարարի կողմից յուրաքանչյուր տարվա համար հատկացված քվոտաների քանակի և առավելագույն գումարի սահմաններում:

բ/ սահմանված կարգով եռամսյակային պարբերականությամբ ներկայացնել հաշվետվություն ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

գ/ աշխատանքները կազմակերպել և որոշումները կայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 457-Ա հրամանով սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հունվարի 14-ի N3 կարգադրությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
14 Դեկտեմբերի 2018 թվականի
N 291 որոշման

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄ

1.Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ՝

Կարապետյան Անահիտ՝ Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ

Խաչատրյան Անուշ՝ Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ-ի բուժքույր, քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Ասատրյան Կարեն՝ Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ-ի փոխտնօրեն,

Հովհաննիսյան Աննա՝ ՍԱՏԳ գլխ.մասնագետ

Սարգսյան Էմանուել՝ ՀԿԽԸ-ի ՎՁ ՄՄ-ի նախագահ:

2.Վայքի ԲՄ ՓԲԸ՝

Բաղդասարյան Արեգա՝ Վայքի ԲՄ ՓԲԸ-ի գլխ.բժշկի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Հարությունյան Լաուրա՝ Վայքի ԲՄ ՓԲԸ-ի, քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Գասպարյան Վիգեն՝ Վայք համայնքի ղեկավարի տեղակալ

Նազարյան Խորեն՝ Վայքի ԲՄ ՓԲԸ-ի վիրաբույժ

Ասլանյան Մանե՝ Վայքի ԲՄ ՓԲԸ-ի թերապևտ

Հանիսյան Էմմա՝ Վայքի ԲՄ ՓԲԸ-ի մանկաբույժ:

3. Ջերմուկի ԱԿ ՓԲԸ

Նալբանդյան Մանուշակ՝ Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ

Դանիելյան Լալա՝ Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ի օպերատոր, քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Սարգսյան Մովսես՝ Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ի թերապևտ

Հարությունյան Տիգրան՝ Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ի թերապևտ

Հովսեփյան Ալվարդ՝ Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ի բուժքույր

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**